# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Սարչապետ համայնք, գ.
Սարչապետ, Հեռ. (077)867459 , sarchapet.lori@mta.gov.am

N 218-18
*04 հունիս 2018թ.*

**ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Ձեզ եմ ներկայացնում Սարչապետ համայնքի ղեկավարի 2018 թվականի մայիսի 31-ի <<Հիմքերի վերականգնման և սեփականության իրավունքը ճանաչելու մասին>> թիվ 111-Ա որոշումը:

Առդիր՝ 1 էջ:

**Համայնքի ղեկավար՝** **Բորիս Բարոյան**

*Կատ. Աշխատակազմի քարտուղար՝ Ա. Մարտիրոսյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնք
ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, (077)867459 sarchapet.lori@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

31 ՄԱՅԻՍԻ 2018թվականի N 111-Ա

## ՀԻՄՔԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ ՀՕ 59-րդ հոդվածի 3-րդ մասով, 60-րդ հոդվածով, «Ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների և ինքնակամ զբաղեցրած հողամասերի իրավական կարգավիճակի մասին» ՀՀ ՀՕ 510-Ն օրենքով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետով,հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2005թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումը, «Մել» և «Միլ» գեոդեզիայի և քարտեզագրության կենտրոն ՍՊԸ-ի կողմից կազմված հատակագիծը, տեխնիկական անձնագիրը և հաշվի առնելով Լյովիկ Սարկիսի Սահակյանի ներկայացրած դիմումը՝

*ՈՐՈՇՈՒՄ ԵՄ.*

1.Օրնքի ուժով 06-092-0035-0010 ծածկագրի տակ գտնվող 0.07568 հա փաստացի օգտագործվող հողամասի նկատմամբ ճանաչել Լյովիկ Սարկիսի Սահակյանի, Դուսյա Սեդրակի Սահակյանի, Միեր Լյովիկի Սահակյանի, Վարդուհի Լյովիկի Սահակյանի և Անուշիկ Լյովիկի Սահակյանի բաժնեմասային սեփականության իրավունքը:
2. Հողամասը չի գտնվում ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, չի գտնվում ՀՀ ՀՕ 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, հողամասի սեփականության իրավունքի ճանաչումը չի սահմանափակում այլ անձանց իրավունքները և (կամ) չի առաջացնում սերվիտուտ:
3.Վերականգնել և ճանաչել 0.07568 հա բնակելի կառուցապատման հողամասում գտնվող, այլ անձանց իրավունքները և օրենքով պահանջվող շահերը չխախտող, անձանց քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական իրականացրած և հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք չառաջացնող 239.87 քմ մակերեսով ինքնակամ շինությունների նկատմամբ Լյովիկ Սարկիսի Սահակյանի, Դուսյա Սեդրակի Սահակյանի, Միեր Լյովիկի Սահակյանի, Վարդուհի Լյովիկի Սահակյանի և Անուշիկ Լյովիկի Սահակյանի բաժնեմասային սեփականության իրավունքը համաձայն «ՄԵԼ ԵՎ ՄԻԼ» ՍՊԸ-ի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:
4. Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծով:
5. Սույն որոշումից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Լոռու տարածքային ստորաբաժանումում:
6. Սարչապետ համայնքի վարչական տարածքում գտնվող /բնակավայր Պրիվոլնոյե/ Լյովիկ Սարկիսի Սահակյանին, Դուսյա Սեդրակի Սահակյանին, Միեր Լյովիկի Սահակյանին, Վարդուհի Լյովիկի Սահակյանին և Անուշիկ Լյովիկի Սահակյանին պատկանող առանձնատանը տալ հասցե՝ փ.6, տ.11:
7.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման հաջորդ օրվանից:

**Համայնքի ղեկավար՝** **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

2018թ. մայիս 31
գ.Սարչապետ